ՀԱՏՈՒԿ ԳՆԴԻՑ՝ ԹԱՄԱՆՅԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԱՆՎԱՆ

Ազատությունը: Հայրենիքի ազատությունը... Անկախ ապրելու նրա իրավունքը... Նրա ոտնահարված իրավունքների պաշտպանությունը: Այդ արժեքներն էին դավանում նրանք: Ու հանուն այդ արժեքների եկան պայքարի՝ անձնուրաց, ինքնամոռաց պայքարի...

Սկիզբը 88-ին էր: Ազգային ինքնագիտակցության զարթոնքը պաշտպանել էր պետք: Դարավոր թշնամուց պաշտպանվել, ինքնահաստատվել էր պետք: Ու հենց այդ նպատակին էր հետամուտ ՆԳ նախարարությանն առընթեր Հատուկ գունդ ստեղծելու մասին որոշումը: Գնդի առջև դրվելիք խնդիրներն էին ներքին կարգուկանոն հաստատել (խառնաշփոթի համընդհանուր մթնոլորտում կարևոր նախապայման էր այդ), տարերային ադետների դեպքում փրկարարական աշխատանքներ կազմակերպել (դեռ թարմ էր Երկրաշարժի հիշողությունը), կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի դեմ պայքարել, պաշտպանել ՀՀ ներքին եւ արտաքին սահմանները: Ու սեպտեմբերի 20-ը ամրագրվեց իբրեւ Հատուկ գնդի ծննդյան օր: Հրամանատար նշանակվեց գնդապետ Սերգեյ Առաքելյանը, շտաբի պետ Ֆելիքս (Ռաֆիկ) Գզոյանը: Զորամասի կոմիսար էր Սենիկ Պողոսյանը (Քեռի), քիմբանի պետ՝ Վաչագան Չիբուխչյանը, սպասավորության գծով տեղակալ՝ Կոստան Կոստանյանը: 26 վաշտեր էին ընդգրկված գնդի կազմում: 1990թ. հոկտեմբերի 5-ին Հատուկ գունդը հանդիսավոր երդում տվեց ու Եռագույնը որպես առաջնորդ ունենալով վաշտերը մեկնեցին սահմանամերձ գոտիներ մարտական խնդիրներ կատարելու... Երասխավան... Կոսնիձոր... Նոյեմբերյան... Այնուհետեւ Լաճաշին Ղարաբաղ... 1991թ. հունիսին երկու ջոկ՝ Ջիվան Աբրահամյանի հրամանատարությամբ մեկնեցին Շահումյանի շրջան: Նույն ամսին ինքնապաշտպանական մարտերի ժամանակ, խորհրդային զինված ուժերին դիմակայելիս, երկու մարտական ընկերների հետ (Վարդան Տերտերյան, Նիկոլայ Հայրապետյան) զոհվեց Ջիվան Աբրահամյանը:

...Պատմում է գնդի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Գեւորգ Հակոբյանը ու ափսոսանքով, թախիծով է լցվում հայացքը: Բայց եւ, մի տեսակ, հպարտությամբ է շեշտում, որ Ջիվան Աբրահամյանը միակ ազգային հերոսն է գործող բանակից...

1991-ից Հատուկ գնդի վաշտերը մասնակցել են ՀՀ եւ ԼՂՀ բոլոր մարտական գործողություններին: 1991թ. Գունդը վերանվանվեց պարեկապահակազորային ծառայության հատուկ գունդ (հրամանատար՝ Աշոտ Պետրոսյան):

1992-ին սահմանապահ 002 հատուկ գունդ (սահմանապահ զորքերը ստեղծվեցին հենց այս բազայի վրա): Հրամանատարն արդեն գնդապետ Վոլոդյա Կարապետյանն էր. նույն թվի հուլիսին զոհվեց Մարտակերտի Մատաղիս գյուղի մոտ ծավալված մարտերի ժամանակ (հետմահու պարգեւատրվել է ՀՀ Մարտական խաչ եւ ԼՂՀ Մարտական խաչ երկրորդ աստիճանի շքանշաններով): Գունդը մասնակցեց Մարտակերտի պաշտպանության եւ Կիչան-Սրխավենդի ազատագրման ծանր մարտերին:

1993-ին վերանվանվելով ՀՀ ՊՆ-ի առանձին մոտոհրաձգային հատուկ գունդ, մայոր Գուրգեն (Գագիկ) Մելքոնյանի հրամանատարությամբ մասնակցում էր հիմնականում Կուբաթլուի, Զաբրայիլի, Զանգելանի շրջանների ազատագրմանը:

1994թ. մարտին գունդը մասնակցում է Օմարի լեռնանցքի հետգրավմանը, Քելբաջարի պաշտպանության մարտերին, իսկ մինչեւ 1997թ. դեկտեմբերի վերջը պաշտպանում էր Օմարի լեռնանցքը:

1995-ից գնդի հրամանատարն էր գնդապետ Համլետ Հովհաննիսյանը, այնուհետեւ փոխգնդապետ Ալբերտ Գալստյանը:

2000-ի հունիսից գնդի հրամանատարն է Գարեգին Գաբրիելյանը:

Անգնահատելի է Հատուկ գնդի դերը Հայոց Բանակի ստեղծման գործում: Նա դարձավ այն հիմնաքարը, որի վրա պիտի բարձրանար հաղթող Բանակի սյունը. Հատուկ գնդի վաշտերի բազայի վրա ստեղծվեցին մյուս ստորաբաժանումները: Ի դեպ, 1992-ից զորամասը համալրվում էր պարտադիր զինծառայություն անցնող զինակոչիկներով: Հատուկ գունդը նաեւ մեծ թվով որակյալ սպայական կադրեր տվեց Բանակին: Այսպես ծնվեց ու կայացավ Հայոց Բանակը: Կայացավ ու առաքելություն ստանձնեց պաշտպանել Անկախությունը հայոց:

Գնդի հուշամատյաններում գրանցված են 172 սպաների ու զինվորների անուններ:

- Նրանք ընկան՝ պաշտպանելով մեր անկախությունը...

120 հատուկգնդեցիներ արժանացել են տարբեր պարգեւների...

Բոլոր հատուկգնդեցիները պարծանքով են արտասանում Ջիվան Աբրահամյան անունը...

Երբ խնդրեցի պատմել, հուզվեց փոխգնդապետ Գեւորգ Հակոբյանը.

- Ո՞ր մեկին հիշես... բոլորին էլ ճանաչել եմ, բոլորի գործերն էլ արժանի են բարձրագույն գնահատականի...

Նրանց սխրանքը լեգենդ է եւ վավերացվել է գրքով («Նվիրյալները». Սամվել Եղիազարյան, «Հատուկ գունդ». Մելանյա Պետրոսյանց)... Նրանց սխրանքը հերոսապատում է. շարունակություն այլ հերոսապատումի: Գնդի 11-ամյա հոբելյանին սեպտեմբերի 20-ին Հատուկ գունդը վերանվանվեց 89-րդ Թամանյան դիվիզիայի անվան հատուկ հրաձգային գունդ... -

- 1941-ին, երբ կազմավորվեց Թամանյան դիվիզիան, օրհասի մեջ էր հայրենիքը: Ու 1990-ին էլ նույն օրհասն էր սպառնում հայրենի երկրին,- ասում է հրամանատարի դաստիարակչական գծով տեղակալ, մայոր Գեորգի Հայրապետյանը:- Ու պատահական չէր, որ հենց նրան հանձնվեց լեգենդար դիվիզիայի դրոշը...

... Գնդի մուտքի մոտ Թամանյան դիվիզիայի ու Հատուկ գնդի անցած մարտական ուղիների քարտեզներն են, մեջտեղում խորհրդանշող դարձած Հայոց զինանշանը երկու դրոշներով՝ Հատուկ գնդի Եռագույնն ու Թամանցիների մինչեւ Բեռլին հասած դրոշը: Հպարտ է գնդի հրամանատար, գնդապետ Գարեգին Գաբրիելյանը: Սակայն միայն հպարտությունը չէ. պատասխանատվությունն էլ բնականորեն մեծանում է: Մանավանդ եթե նշանաբանդ է.

- Առաջինը լինել գյուղում. բայց ոչ երկրորդը քաղաքում: Զինվորականն իրավունք չունի աշխատանքում թերանալ կամ սխալ թույլ տալ: Ի վերջո, տուժում է ոչ թե մեկը, այլ զորամասն ամբողջությամբ: Տուժում է հայրենիքը: Հետեւաբար հրամանատարը սխալվելու իրավունք չունի:

Ի դեպ, գնդապետ Գաբրիելյանը 1979թ. ընդունվել եւ 1983-ին ավարտել է Բաքվի բարձրագույն ռազմական ուսումնարանը: Ծառայել է տարբեր վայրերում եւ 1992թ-ից արդեն Հայոց Բանակում. եղել է Վարդենիսի զինվորականն պարետ, հետո գնդի հրամանատար:

1995-2000թթ. ներքին զորքերում եղել է գնդի հրամանատար եւ 2000թ. հունիսից Հատուկ գնդի հրամանատար: Հայրենիքը նրա համար տունն է, ընտանիքը, ծնողները, զավակները երկիրը: Սակայն

- Երբ կարոտում ես հայրենիքիդ, նոր միայն հասկանում ես՝ ինչ է այդ:

Սպայի պատիվը նրա համար նամուսն է, արժանապատվությունը...

- Սպան պիտի նամուս, արժանապատվություն ունենա եւ «պատիվ ունեմ» արտահայտությունն էլ գնահատի ըստ արժանվույն: Դա հանուն հայրենիքի պայքարելն է, նրա համար ամեն ինչ զոհելու կարողությունը: Սպան մենակ զինվորին չէ, որ պիտի օրինակ տա, այլեւ իր շրջապատում՝ յուրաքանչյուրին: Նրա վեհությունը պիտի ամենուր ակնհայտ լինի... Մեր բանակում շատ են լավ սպաները,- մի տեսակ թախիծով է ասում այդ բառերը՝ երեւի հիշելով նրանց, ովքեր այլեւս չկան...- Ուրիշ ազգերը դրան չէին դիմանա... Իսկ նրանք դիմակայեցին անասելի դժվարությունների: Այնքա՜ն ջահելներ՝ հանուն հայրենիքի... Գիտեին՝ ուր են գնում... Հենց դա է սպայի պատիվը: Հայ սպան միշտ էլ յուրահատուկ է եղել... ու պիտի շարունակի մնալ այդպիսին: Հայ զինվորն էլ: Անգամ փողոցում, տրանսպորտում պիտի երեւա նրա յուրահատուկ լինելը: Պիտի հասնենք նրան, որ ազգը սպային ըստ արժանվույն հարգի...

... Խուսափեց գնահատականներից.

- Ես միայն կանոնադրության հետ կարող եմ համեմատել եւ ըստ այդմ գնահատել: Կգնահատեմ բավարար... Բավարար՝ գոնե ռեալ «4» գնահատականի համար: Իսկ ընդհանուր առմամբ՝ մենք պարտավոր ենք միշտ պատրաստ լինել դիմակայել հակառակորդին եւ միշտ լինել առաջին գունդը... որ ժողովուրդը խաղաղ ապրի...

Իսկ դրա համար հարկ է, որ զինվորի կենցաղային պայմանները, հանգիստը, սնունդը համապատասխան ձեւով կազմակերպվեն... Ի վերջո, ինչպես հաստատում է հրամանատարը, զորամասը զինվորի երկու տարվա տունն է, ընտանիքը, ու նա պիտի հպարտությամբ հիշի այդ: Ու հրամանատարն էլ պիտի օրինակ տա իր անձով: Սպան կեցվածքով պիտի վաստակի պատիվը, եւ վաստակած պատվով դաստիարակի զինվորին:

- Էսօր մենակ զինվորից չէ, հրամանատարից էլ շատ բան է կախված, ազգից էլ: Շատ բան փոխվել է դեպի լավը, բայց է՛լ ավելի լավ պիտի լինի: Էսօր սխալվելու իրավունք չունենք: Ցեղասպանությունը մեր սխալների արդյունքն էր: Պարծենալու բան չէ այդ, այլ նախատինք... Ունենայինք հզոր բանակ, չէր լինի 15 թիվը, պետականություն կունենայինք, հզոր երկիր կլինեինք: Զինվորի մեջ պիտի դաստիարակել այդ... նա կհասկանա, կընկալի.... Մեր խնդիրը հայրենիքի իսկական պաշտպաններ դաստիարակելն է: Ու նա պիտի ճանաչի իր անցյալը, նրա սխալները՝ հետագայում դրանք չկրկնելու համար:

... Մի հետաքրքիր առանձնահատկություն եւս. գնդի գրադարանում ուշադրությունս գրավեցին հանրակրթական դպրոցի նոր ուսումնական ծրագրերի դասագրքերը: Դաստիարակչական գծով տեղակալ մայոր Հայրապետյանը բացատրեց.

- Ուսուցիչների ենք հրավիրել, որ շաբաթ-կիրակի օրերին դասընթացներ անցկացնեն ութամյա եւ թերի կրթություն ստացած երիտասարդների հետ (մոտ 35%-ը այդպես է զորակոչվում): Հայ զինվորը պիտի կրթված լինի: Ու նրանք զորացրվում են՝ ունենալով տասնամյա կրթության վկայական...

Ծրագիրն առայժմ փորձնական է (ի դեպ՝ միակը), որ իրականացվում է «Բարիկ-Ա» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Հարուստ է տասնմեկամյա զորամասի կենսագրությունը, ու ասելիքն էլ այնքան շատ է, որ պարզապես անհնար է մեկ օրում թերթել նրա փառքի ու հպարտության բոլոր էջերը: Վերջին մեկ տարին էլ շատ բան է ավելացրել... Ու երեւի այդպես էլ պիտի լիներ. Հատուկ գունդը առանձնահատուկ պիտի լիներ, եւ 89-րդ Թամանյան դիվիզիայի պատվավոր անվանն արժանանալը լավագույն գնահատականն է նրա կենսուղու: